

2875

ՀԱՅՈՒԹԻՒՆ

1918

01 JUL 2000

Գրադարան «Հիաստաղի»-ի № 11.

Վ. ԽՈՒԷՆԻ

Ս Ո Ց Ի Ա Լ Ի Ձ Մ

Ե Ի

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

IMH9

Խ-82

Թիֆլիս

Գրադարան «Հիաստաղի»

1918

13.05.2013

2875
0670

335/1743
4-83 4-82



ՍՈՑԻԱԼԻԶՄ
ԵՒ
ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Բանուր. Միջազգ. Հնկերու-
թիւնը յայտարարում է, որ նրան
յարող բոլոր միութիւններն ու
առանձին անհատները իբրև էիմք
իրենց վերաբերմունքի զեպի բո-
լոր մարդիկ՝ անկախ սրանց ցե-
ղից, կրօնից և ազգութիւնից՝ ըն-
դունում են ճշմարտու-
թիւնը, արդարութիւնը և
բարոյականութիւնը —
չպէտք է լինին պարտակա-
նութիւններ առանց ի-
րաւունքների և իրա-
ւունքների՝ առանց պար-
տականութիւնների:

Առաջին Իստեքնացիոնալի կոչը:

1920-9448
1964 P.

I
Սոցիալիզմ և հումանիզմ

Սոցիալիստական սկզբունքների ու
իդէալների և բարոյական արժէքների
ամենաթեթև քննութիւնն անկամ ցոյց



7.
1742
2001
1701

1285-93 +

կտայ, որ սոցիալիզմի և հումանիզմի, աշխատուտը դասակարգի սոցիալական իդէալի և ընդհանուր մարդկային բարոյականութեան մէջ ոչ մի ներհակութիւն չկայ: Ընդհակառակը, սոցիալիզմը ձգտում է իրականացնել ընդհանուր մարդկային բարոյական իդէալները, որ մինչև հիմա վերացական ու անգործնական են մնացել: Սոցիալիզմը փորձնական բարոյականութիւն կամ գործնական եւ իրական հումանիզմ է: Դա աշխատում է կիանքի սոցիալ-անտեսական պայմանները փոխելով հնարաւոր դարձնել բարոյականութիւնը:

Սոցիալիզմի որոշ դասակարգի վրայ յենւելն ու նրա շահերով առաջնորդւելը համարում են անպարտք նրա ոչ հանրամարդկային ընտելութեան ու ձգտումներին: Բայց չկայ աւելի անհիմն մի առարկութիւն, քան նեղ դասակարգայնութեան ու ետականութեան այդ մեղքը, որի մէջ ուղում են մեղադրել սոցիալիզմին: Բանւորական նեղ դասակարգային ետականութեան ու բա-

րոյականի տիրապետութեան մեղադրանքը բարոյագիտութեան մէջ նոյնքան է հիմնաւոր ու ընական՝ որքան բանւորական տեական գերիշխանութեան զրոյարտութիւնը քաղաքականութեան մէջ: Երկուսն էլ արդիւնք են սոցիալիզմի հիմնական հանրամարդկային սկզբունքների ու նրա էութեան կամ կատարեալ անգիտութեան կամ գիտակցական ու գիտաւորեալ անգիտացման:

Սոցիալիզմը առաջ զարով ու զարգանալով մի դասակարգային հասարակութեան մէջ, իր ամբողջ էութեամբ հակադրւելով դրան և կամենալով վերացնել դասակարգային հակադրութիւնները ու մի ամբողջական—դասակարգազուրկ հասարակութիւն ստեղծել՝ կամայ-ակամայ, իրերի երկաթէ տրամարանութեամբ և իր գոյութեան իրաւունքի ու իմաստի վճռական հրամայականով ինքն եւ դասակարգային գործելակերպ է ընդունում, յենւում է որոշ դասակարգի վրայ և առաջնորդ-

ևում նրա շահերով, Բայց նրա ձեռ-
տուհները հանրամարդկային միտումներ
և ուղղութիւն ունին: Նա դասակար-
գային է իր գործեակերպով ներկայ
դասակարգային հասարակութեան մէջ,
բայց ոչ իր վերջին նպատակներով:
Նրա դասակարգային տես- կէտը պայ-
քարի տեսակէտ է և ոչ սկզբունքային:
Սկզբունքով ու վերջական նպատակ-
ներով սոցիալիզմը հանրամարդկա-
յին է:

Սոցիալիզմը՝ զինւած մարդկութեան
ու պատմութեան ձեռք բերած իմաս-
տութեամբ, մարդկային ոգու մարմնա-
ցում Ֆաուստի պէս երկար որոնում-
ներէից ու մոլորումներից յետոյ եկել է
այն անշեղ եզրակացութեան, որ եր-
բէք եզակիօրէն, անհասապէս չի կա-
րելի հասնել երջանկութեան—ճշգրիտ
կենցաղավարութեան ու աշխարհիմա-
ցութեան: Դրան կարելի է հասնել
միայն համայնօրէն, այն էլ ոչ թէ վե-
րից, բարձր դասերից կամ զուտ կրօ-
նա-բարոյական քարոզներով և զուտ

փիլիսոփայական որոնումներով, այլ
միայն և միայն վարից, ժողովուրդից,
ընկերային-անտեսական աշխատանքով
—«ազատ հողի վրայ, ազատ ժողովրդի
հետ» (Գէօթէ):

Նւ Սոցիալիզմը իր հանրամարդկա-
յին իրէականերին հասնելու համար ըս-
կուում է ժողովրդից, ճնշւած ու հա-
րըստահարւած դասից: Անխուսափե-
լիօրէն դասակարգային հողի վրայ
կանգնելով՝ նա դաստիարակում է ու-
պադասակարգային ոգով, ընդհանուր
մարդկային բարոյականութեան սկզբ-
բունքներով: Սոցիալիզմը կարող է
հպարտութեամբ կրկնել Կանտի խօսքը,
թէ «իբ բոլոր գործողութիւնների մեջ
մարդկութիւնն իր համար սուրբ է մը-
նում»:

Արդէն Ֆր. Լասսալը նկատել է, որ
բանուորութեան դասակարգային սեսա-
կէսը հանրամարդկային սեսակէտ է, որ
բանուոր դասակարգն իր էութեամբն
արդէն ամբողջ մարդկութեան իրէալ-
ների կրողն է հանդիսանում.—«Նրա

գործն իբօք ամբողջ մարդկութեան գործն է, նրա ազատագրութիւնն ամբողջ մարդկութեան ազատագրութիւնն է, նրա տիրապետութիւնը — բոլորի տիրապետութիւնը: Հետեւը ար բանւոր դասակարգի դադափարը հասարակութեան տիրոջ սկզբունք յայտարարելը հասարակութեան թշնամանքի և դասակարգային բաժանման կոչ չէ, այլ հաշտութեան և սիրոյ կոչ, որ մի անգամ հնչելով ժողովուրդի սրտից, յաւերժօրէն նրա իսկական նշանաբանը կմնայ»: Իսկ Մարքս-էնգ'լսեան «Մանիֆեստը» յայտարարում էր, որ «շահագործւող և ճնշող դասակարգը (պրոլետարիատը) չի կարող այլևս ազատագրւել շահագործող և ճնշող դասակարգից (բուրժուազիայից) առանց միաժամանակ եւ րնդմիտ ազատելու ամբողջ մարդկութիւնը շահագործումից, ճնշումից և դասակարգային կոիւնսերից»: Նոյնը հաստատում է և Կառլցկու «էրֆուրտի ծրագիրը», — «Սոցիալական յեղափոխութիւնը նշանակում է

ոչ միայն պրոլետարիատի, այլ և ամբողջ մարդկութեան ազատագրութիւնը»: Աշխատաւոր դասակարգի դերի, նրա և մարդկութեան ճակատագրերի այդ սերտ շաղկապման և փոխադարձ պայմանաւորման գիտակցութիւնը բարձրացնում է նրան դասակարգային նեղ շրջանակից: Իր պատմական առաջելութեան վեհ գիտակցութիւնը յրաբարոյական գիտակցութեան հիմնաքարն է: Դասակարգային ու հանրամարդկայինի այդ աննշութեան, պատմութեան օրէնքներով անբաժանելիութեան համոզումը ձուլում են երկու դատերը: Աշխատաւորը կուում է. ապրում է ոչ նեղ անհատական և ոչ էլ դասակարգային շահերի համար, այլ ընդհանուր մարդկութեան բարօրութեան յոյսով: Նրա ցնցեսական շահը նաև «զազափարի շահ» է: Աշխատաւորական դասակարգային եսականութիւնն իսկապէս դիմակաւորւած հանրամարդկային այլասիրութիւն է: Աշ-

խառաւորը այլասէր է դառնում իր անհասակամն ընդհանուրի մեջ որոնելով: Նա որդեգրում է մարդկութեան աւետարանն իր դասակարգա ին կացութեան անմիջական թելադրեալներինց, իր գոյութեան ինքնապահպանման և ինքնազարգացման հրամայականներով, մի հաստատուն, գործի հետ ձուլած իրապատէս գնդափարականութեամբ: Եւ բնականաբար ներկայումս գոյութիւն ունեցող դասակարգերինց աշխատաւորութիւնն է սոցիալիզմի—ողջ մարդկութեան ազատագրութեան ու եղբայրութեան դրօշի կրողը:

II

Միջին դասի բարոյականութիւնը

Միջին դասը կառչած իր մանր սեփականտիրութեան և ճղճիմ գո ութեանն՝ ինքն էլ է մանրացել, հոգեպէս և մտաւորապէս տափակել, բթացել: Մանրացել են նրա ձգտումներն ու «իդէալները»: Ասորեայ կեանքի

մանրութեան մէջ այդ դասը կորցրել է ամեն մի բարձր հեռապատկեր, լայն հորիզոններ, նոր աշխարհի—նոր կեանքի յոյսը: Իր խղճուկ տնտեսութեան մէջ մանր բուրժուազիան ստեղծել է «փոքրիկ մարդու» իդէալը, որը կտրել է ամեն մի բարոյական-գաղափարական կապ բոլոր դասակարգերի հետ—վերի՝ թէ վարի, հայրենի՝ թէ օտար: Վարից, բանւորութիւնից նա յետ է քաշում մի բթամիտ երկիւղով, իր թշառ տնտեսութիւնը, մանր սեփականութիւնը կորցնելու անմիտ սարսափից: Իսկ իր տնտեսական մանրութեան ու գաղափարական քարացման մէջ կորցրել է դէպի վեր բարձրանալու ընդունակութիւնն ու պահանջը: Եւ իր անշարժութեան փոքրութեան, աւելին լինելու անկարողութեան գիտակցութեան մէջ՝ միջին դասն ամենապահպանողական, ամենաաւանդապան, հնապաշտ և անշարժ զանգւածն է, որ տէրերի և իշխողների առաջ լեցւում է անճարակ թոյլի անասնական երկիւ-

զածաւթեամբ ու ոչխարային ստրկամտութեամբ: Եւ նա երջանիկ է այդ ոգեգուրիկ, մարդկային արժանաւորութիւնը ձգող, ստորացնող կոյր պաշտամունքի մէջ: Ա. դ տիրապաշտ. ըստըրկամիտ դասակարգն իրեն երջանիկ է զգում տէրերի կեկեղեյու և արքայական պալատի հովանու տակ: Կորցրած ապագայի յոյսը, ներկայի սեքը նա ապրում է միայն վերացական հաւատով և անցեալում: Եւ կրօնամիջնագրեան ասպետական հէքեաթների ու պալատական պարահանդէսների շրջանը նրա երազների ու իդէալների միակ աշխարհն է:

Միջին դասը — բառի առաւելագէտ եւրոպական իմաստով — գաղափարականի տեսակէտից մտքով, հոգով և բարոյագէտ կաթլածահար մարդկութիւնն է: Նրա իդէալն իրօք որ «փոքրիկ մարդն» է մանր իր տնտեսութեամբ, մանր իր երազներով ու իդէալներով: Իս նիցէհեան «անյուսօրէն անձաբ միջակն» է...

III

Բուրժուազիայի բարոյականութիւնը

Ոչ նւազ բացասական գաղափարագուրիկ են և ներկայի մէջ ապրող բարձր գոտակարգերը. առանձնապէս բուրժուազիան: Սրանք «յո սի» և «սիրոյ» հետ կորցրել են նաև միջին դասի հոգեբարոյական կեանքի միակ սիւնը «հաւատը»: Բուրժուազիան կտրել է բարոյագէտ նաև քրիստոնէութիւնից, իր իդէալների միակ աղբիւրից: Նա վազուց երես է դարձրել, իր գոտակարգային շահերով [Եւ ս գւել է նաև «լուսաւորութեան շրջանի» գաւակ Ֆիլանտրոպիզմը մարդասիրութիւնը, դէն է ձգել, տանահարել է ազնւականութեան սկզբունքները — «մարդու և քաղաքացու իրաւունքները»: Քրիստոնէական բարոյականութիւնը կարող էր և բաւարարում էր հոգատուր, աւատական ազնւականութեանը: Բայց նա անկարող է այսօր բաւարարել, իրրև բարոյական ու գաղափարական ուղ-

մամթիւրք. ծառայել մինչ իր սեղանս
 առամներն սպառազէն ու մարտական
 — բարձրագուրկ բուրժուազիային: Իր
 կապիտալիստական յօշոտող ախոր-
 ժակներով նա ծարաւի է նոր առևտրա-
 կան շուկաների և հում նիւթ մատա-
 կարարող երկիրներին, նոր կեանքի,
 յոր աշխարհաւեր պատերազմներէ:
 Առուելլապէս կապիտալիզմի զարգաց-
 ման նորագոյն շրջանը իր տնտեսա-
 կան աշխարհակալութեամբ իմպերիա-
 լիզմ) յարատեօրէն ներքին արդիւնա-
 բերական գործարանային «պատերազ-
 մի» մէջ է պահում իր երկրի փողո-
 վրդին և համաշխարհային կուր մշտա-
 կան սարսափի տակ — ողջ մարդկութիւ-
 նը: Եւ բնական է, որ այս քնդանօրա-
 յին քիստոնեուքիւնը ոչինչ ընդհանուր
 բան չունենար բուն քրիստոնէութեան
 հետ: Ոչ միզասակարգի մօտ բարոյակա-
 նութեան տեսականն ու գործնականն
 այնպէս ներհակօրէն չեն հակադրում
 իրար, որպէս ներկայ բուրժուազիա ի
 մօտ: Սա կորցրել է իր ողջ գաղափա-

բային հիմքերը: Սա ամենագաղափա-
 րադուրկ և բարոյադուրկ դասակարգն
 է: Եւ որքան զօրեղանում է նրա ար-
 տաքին իշխանութիւնը, քաղաքական
 ու տնտեսական ուժի ծաւալումը, այն-
 քան էլ արագ է ընթանում նրա ներ-
 քին սնանկացումը: Սրա պատճառը
 բացարձակ բեկամութեան սկզբունքն է:

Իր դասակարգային նեղ շահերով
 բուրժուազիան անհաշտօրէն հակա-
 դրում է ոչ միայն աշխատաւոր, այլ
 և միջին դասին, ոչ միայն մանր, այլ
 և խոշոր զրամագլխին — թէ իր հայ-
 րենի երկրում և թէ դրսում՝ օտար
 ազգերի աշխատաւորութեան ու բուր-
 ժուազիա ի դէմ: Որովհետեւ կապի-
 տալն ապրում է ոչ միայն յաւելեալ
 արժէքով, իր երկրի բանւորութեան
 արիւն-քրտի քով, այլ և իրենց փոքր,
 մրցելու անկարող տնտեսութիւնների
 կլանումով՝ մեծ զրամագլխի գոյու-
 թեան ավճառական հրամայականներով,
 ուստի և նա ոչ ծրկնք, իրաւունք ու
 բարոյականութիւն չէ ճանաչում, բայց

եթէ փողի, ուժի իրաւունքը: Կապի-
տալի վճռական բարոյական հրամայա-
կանն ասում է.—պէտք է կլանես, որ-
պէսզի չը կլանես: Իր նւաճողական
սխորժակներով բուրժուազիան միշտ
էլ պատրաստ է օշոտելու նաև, այ-
լապէս իրեն շահակից ու «եղբայրա-
կից», այլազգի դրամագլուխը: Ուս-
տի և նա իր գասակարգային շահե-
ներով միշտ էլ թշնաբար է հարկա-
դրում թէ ներսի և թէ դրսի—թէ
աշխատատէր և թէ տիրող գասակար-
գերին: Այս մշտապէս բացարձակ և
անպայման թշնամական յարձակողա-
կան դիրքի ու գոյութեան պայման
ների մէջ, նա կորցրել է համերաշ-
խութեան, խաղող համակիցութեան
ամեն մի զգացում: Նա չունի գրա
համար ոչ իրական և ոչ էլ գաղափար-
ական հիմք կամ շահ: Մարտական և
աշխարհակալ կապիտալիզմը կորել է
ներքին կապերը բոլոր գասակարգերի
և ազգերի հետ: Նրան չեն միացնում և

1285-93
2001
178

գաղափարապէս ոգևորում նաև իր
համադասակարգային շահերը:

«Դրամատէրերի միութիւնը» լոկ մի
զինակցութիւն է ընդհանուր թշնամու-
հանդէպ, ընդհանուր քաղաքական և
տնտեսական գերիշխանութիւնը պահ-
պանելու, լոկ անհատական գասակար-
գային-եսական ջանքերի մի ակամայ
միութիւն: Ներքուստ ամեն մի դրա-
մատէր ատամներ է կրճատցնում միւս-
սի վրայ և պատրաստ է անհատօրէն
միշտ նրան կլանելու ու ցնծում է
միւսի անկումով: Դրամատէր գասա-
կարգի շահերի միութիւնը զուրկ է
որև է բարոյական - գաղափարական
պարունակութիւնից. որովհետև գա
միութիւն է լոկ «թշնամու» գէմ և ոչ
ներքին պահանջների և գոյութեան
հիմունքների միութիւն: Բուրժուա-
ներն իրենց գոյութիւնը պահպանում
են նաև իրար արիւն ձծելով, իրար
կլանելով: Փոխադարձ գայլուբեան բա-
րոյականութիւնն է դա: Հուստ, յոս,
սէր—ամեն ինչ նա զրել է թնդանօթի

վրայ: Փոխադարձ յօշոտման քաղաքա-
կանութիւնն է նրա կրօնը, «ապրանք-
ներն» ու փողը նրա կուռքերը, «Ֆե-
տիշները», նրա հոգեկան-կրօնական
աշխարհը*): Դրամատիրական «իշխե-
լու կամքով» և իր զօրութեամբ արը-
շիւ «շիկահեր գազանի» տարամերժ և
ընկերամերժ անհատապաշտութիւնն է
դա, որ իրական «ամորալիզմի» — ան-
բարոյականութեան մէջ իր անկման
վերջին աստիճանին՝ բացարձակ մար
դակերութեան է հասել:

Այդպիսով բուրժուազիան ևս թա-
փուր գաղափարական ձգտումներից,
անանկացած բարոյապէս, «ազատա-
կանութեան» — լիբերալիզմի սրբազան
աւանդներից էլ կտուած: Բուրժուա-
զիան ևս նեղ դասակարգային շահերի
երկրպագու, դասակարգային — անհա-
տական լպիրշ բարոյականութեան
պաշտպան, ինչ որ էին իրենից առաջ

*) Ա.ս մտքով է Մարքսն իր «Կա-
տիստալի» մէջ խօսում «ապրանքների
Ֆետիշական բնաւորութեան» մասին:

տիրող դասակարգերը, — ազնւականու-
թիւնն ու հոգևորականութիւնը

IV

ԱՇխատաւոր ժողովրդի սոցիալիսական
բարոյականութիւնը.

Այդ բոլոր դասակարգերն էլ, բացի
աշխատաւորութիւնից, կորցրել են ամ-
բողջի, իրենց հաւաքական լսմանկցու-
թեան հետ ունեցած միութեան հասա-
րակական-բարոյական զգացումը: Դը-
րանցից և ոչ մէկին չի հետաքրքրում
հաւաքական միութեան, ընդհանրու-
թեան կամ գաղափարի շահը: Նրանք
միշտ էլ իրենց անհատական, եզակի
նիւթական շահն ունեն ի նկատի. ուս-
տի և չեն կարող տօգորելլ բոլորի
ինքնապահպանումը և զարգացումը
հնարաւորող կարգերի իդէալով, որով-
հետև բոլորի շահերն էլ փոխադարձ
հակադրուում և բացասում են իրար:
Աստեղից և դրանց գաղափարազրկու-
թիւնը: Չկայ շահերի սերտ միութիւն,
ներգաշնակութիւն՝ չկան և գաղափա-

բական ու հոգեկան յարաբերութիւններ, բնագնանուր իդէալներ: Սրովհետեւ իդեալները ոչ այլ ինչ են, բայց եթէ որոշ հաւաքական խմբակցութեան, գասակարգի թէ հասարակութեան ցանկութիւնների ու յոսերի բնզհանուրացումը, գաղափարային վերացումը (արտորակցիան):

Միջին դասի կեանքի բարոյական սկզբունքն է ամեն ինչով գոհ, ամեն ինչ հանդուրժող, կրող, չարին չը հակառակող կենսամեթ ոգու քրիստոնէական «հրաժարիմբը» — ապրել երբողնել. որ ապրեն: Իա «քաղաքական անասունների աշխարհն» է, Մարքսի ճիշտ բնորոշումով:

«Թող անեն՝ ինչ որ ուզում են».— ահա և ոչնչից չակնածող, մարդախոշոր բուրժուազիայի նեղ եսամոլ անհատականութեան սկզբունքը, որ չի ճանաչում ոչ մի բարձր հեղինակութիւն ու օրէնք, չի կանգնում և ոչ մի արդելքի առաջ, ալ ուժեղի, «վերապրողների» իրաւունքը բացարձակ օրէնք յայտա-

բարելով թողնում է անել, ինչ որ կուզեն: Եւ որքան կատարի ու յաղթական՝ այնքան երջանիկ է զգում իրենս «Ինձնից յետոյ թէկուզ ջրհեղեղ — ա՛ն նշանաբանն ամեն մի դրամատիրոջ և դրամատէր ազգի», ասում է Մարքս:

Վերջապէս այդ առաջին՝ ճղճիմ, յետադէմ և երկրորդ՝ վայրագ սկզբունքների հանդէպ՝ մարդկային բոլոր շահերի համերաշխութեան և փոխազարձօգնութեան — «ձեկը բոլորի եւ բոլորը ձեկի համար» վսեմ սկզբունքը՝ Համաշխարհային թշնամութեան, սնողոք պատերազմի հանդէպ — համաշխարհային եղբայրութեան ու խաղաղութեան դրօշակը, սնանկացած ազատականութիւնից փաստօրէն սրդեգրած ազատութեան, ելբայութեան և հաւասարութեան նշանաբաններով: Առաջին՝ ուղեմական, ազգայնամոլ և տնտեսական աշխարհակալութեան — իմպերիալիզմի նշանաբանն է՝ իրար դեմ, երկրորդի՝ գործով խաղաղամէր միջազգայնութեան և սոցիալիզմի նշանաբանն է —

իրաւ հետ: Եւ կը յաղթէ վերջինը, որովհետեւ սրա կողմն են մարդկութեան ազատագրութեան ու եղբայրութեան նախանձախնդիր մեծամասնութիւնն ու «ժամանակի ողին» — պատմութիւնն ու մշակոյթի ձգտումը (կուլտուրայի տեղեկեցը):

Ընկերային աշխատակցութիւնն ու վիճակակցութիւնը և ոչ միայն հարազատ երկրի, այլ և օղջ աշխարհի աշխատաւոր դասի հետ ունեցած շահակցութիւնն ու փոխադարձ յարգանքը համեմատելու համար երկաթէ կապեր են հաստատում ծովէ ի ծով: Տարբեր երկիրնեցիկ աշխատաւորութեան դատերի նոյնութիւնը, դասակարգային իրարապատկանելիութեան գիտակցութիւնը կապում են սոցիալիստներին հանրամարդկային վսեմ սկզբունքներով և ոգևորում նոր, արդար հասարակարգի ու աշխարհակարգի — ազատ մարդկութեան թեւաւորող իղէալներով: Եւ ներկայ հասարակութեան դասակարգերից աշխատաւորութեանն է յատուկ

այս բարձր իրական գաղափարականութիւնը, որովհետեւ նա է, որ իր ստորկական վիճակում ամենահաստատուն հիմքերն ու մղումներն ունի մի նոր, իր ծաւալով, խորութեամբ ու լայնութեամբ գերօրինակ իղէալական շարժման համար: Նա է, որ իր մարդկային արժանաւորութեան պահպանման և անհատականութեան զարգացման հրամայականներով կոչւած է այդ նոր առաքելութեան — սոցիալիզմի համար:

V

Սոցիալիզմը եւ բարոյականութիւնը.

Սոցիալիզմի գաղափարներով, իբրև մի փորձնական իրական գաղափարականութեամբ տողորւած է այսօր համաշխարհային աշխատաւորութեան խոշոր և ընտիր մասը: Սոցիալական իղէալով այսօր բարախում են միլիոնաւոր սրտեր աշխարհի բոլոր ծայրերում: Դա ընդհանուր դատի արդարութեան ու վեհութեան գիտակցութիւնն է, որ բարոյապէս բարձրացնում է մարդկանց

նեղսիրտ ու շահամոլ եսականութեան շրջանակից: Դա բոլորի եղբայրութեան, մարդկութեան— Եսի և Դու-ի միութեան» նաւասն է, վիճակակից րնկեմաբոլ յարգանքը, սէրը—րնկեբակա-նութեան պաշտամունքը: Եւ սոցիալիզմը բարոյականութիւն է, մարդկութեան միութեան — րնկեբականութեան բարոյականութիւնը, իսկ «Ես-ի և Դու-ի միութիւնը» — նրա աստուածութիւնը:

Սոցիալիզմը միացնում է մարդկանց անկախ ազգութիւնից, կրօնից եւ երկրից: Նա կրթում է իր զրօշակակիրներին համայնական ոգով և հանրամարդկա ին իրէշարնրով: Սոցիալիզմն ամենախրական ու ամենազրական հումանիտական (մարդապաշտ) զգրոցն է, որից պիտի գուրս գայ սոցիալիստական ոգով դաստիարակւած նոր, կենսախինգ, առողջ և ամբողջ մարդկութիւնը—ազատ, հաւասար և եղբայրացած մարդկութիւնը: — Ինտերնացիոնալ... Մայիսի 1... Գործադուլային օժանդակութիւն... Աշխատաւորական

լուծանիւր անծոնօթ, օտար երկիրների եղբայրների համար... Որպիտէ վսեմ գաղափարականութիւն, որքան լայն հորիզոններ, որքան վսեմ բարոյական հեռանդակներնր:

Եւ սա կոչում են դասակարգային եսականութիւն, երբ միլիոնաւոր սրտեր բարախում են իրար համար, երբ այնքան այլազան ու անծանօթ եսեր օգնում են իրար: Միայն սոցիալիզմի մէջ է ճշտում բանաստեղծի խօսքը, թէ «Միայն ես-ի մոտանալով է աճում, դարգանում եսը»: Նոյնն է ասում և աւետարանական, բայց ոչ կենսամերժ ճգնակեցութեան իմաստով հասկացած խօսքը՝ թէ «ով իր անձը կորսնցնէ, կը գտնէ»: Կը գտնէ՝ ապրելով իր սեւակի, հաւամական ամբողջութեան կեանքով, ընդգրկելով կեանքն իր բոլոր կողմերով, բազմապատկելով իր եսը: Այդ սոցիոլումն ու ամբողջի մէջ ապրելն ու ժեղացնում է մեր կենսագոյացումը, բարձրացնում, ազնւացնում յմեզ բարոապէս: Այս սոցիալիստական

մտքով իր ետը «մոռանալը» նշանա-
կում է լայնացնել, ընդարձակել դրա
սահմանները, դուրս գալ սնձնական
եսի նեղ շրջանակից, միանալ ամբողջի
հետ, ապրել ընդհանուրի կեանքով:
Մոռացի՛ր քո ետը, երբէք էլ չի նշա-
նակում՝ հրաժարելի՛ր դրանից, մեոցնւր
կամ կորցրնւ այն: Ընդհակառակը. այս
մտքով մոռանալը նշանակում է գտնել
իր ետը իր հաւաքական խմբակցու-
թեան մէջ: Նրա շահերի ու ձգտում-
ների մէջ իր շահերի երաշխիքը, նրա
առաջխաղացութեան մէջ իր դարգա-
ցումը, հասարակութեան երջանկու-
թեան մէջ իր անհատական երջանկու-
թիւնը տեսնել, որոնել ու գտնել:

Սոցիալիզմը թէ պայքարը՝ թէ աշ-
խատանքը և թէ սեփականութիւնը
հաւաքականօրէն կազմակերպելով,
փորձնականօրէն գործադրում է ես-ի
բոլորական շահերը մոռանալու և դրա
փոխարէն հաւաքական ամբողջի մէջ
լինել գտնելու բարոյական սկզբունքը:
Ամեն մի բանւոր առայժմ արդիւնա-

բերելով ու պայքարելով նաւախկանօ-
րէն իր իրական շահերի հրամայական
թելադրութեամբ՝ կիրառում է այդ
սկզբունքը կեանքում: Նա իր իրական-
եռական շահերն իր դասակարգային
նւաճումների մէջ է տեսնում և դրա-
նով իր մէջ նամայնականութեան հա-
կումներ ու սովորութիւններ ամրաց-
նում:

Սոցիալիստական շարժումը լոկ
տեխնիքական-տնտեսական շարժում
չէ, այլ և դաստիարակչական, բարո-
յական շարժում: Դա զարգացնում է
աշխատաւորների մէջ հասարակական
առաքինութիւններ, պարտականու-
թեան զգացում, քնկերական ոգի: Եւ
դրանով էլ օրէցօր բարոյապէս նա-
խապատրաստում, դաստիարակում գա-
լիք ընկերվարական հասարակութեան
համար, նոր բարոյական մարդկու-
թեան համար:

Անա թէ ինչու սոցիալիզմը հանրա-
մարդկային սկզբունքների և ամենա-
բարձր բարոյականութեան գործադրու-

քիւնը եւ իրականացումն է: Սոցիալիստական շարժումը ոչ միայն դասակարգային պայքար է, այլ և պայքար դասակարգերի դեմ. Եւ որ գլխաւորն է, պայքար բնդդեմ դասակարգային հասարակութեան: Լինելով մի կազմակերպւած պայքար ընդդէմ դասակարգայնութեան՝ դա երբէք էլ շահադրժուած չէ որ և է դասակարգի քաղաքական և տնտեսական գերիշխանութեամբ:

Կուելով դասակարգային իշխանութեան դէմ սոցիալիզմը կուռւմ է նաև տիրողներին «դասակարգային» բարոյականութեան դէմ, որոնց տեսականն ու գործնաւանն իրար այնպէս են յարաբերում, որպէս հուրն ու ջուրը: Դասակարգային շահերի հետ պայքարում են նաև համապատասխան բարոյական հասկացողութիւնները. Եւ ինչպէս որ կյաղթանակէ այն դասակարգը, որի շահերն ու առաջխաղացութիւնը համապատասխանում են պատմութեան ընթացքին, ընդհանուր մշտ-

կոյթի զարգացմանը, այնպէս էլ կը յաղթանակէ, կը վերապրէ այն «բարոյականութիւնը», որի սկզբնականները միատեսակում են «մարդկութեան շահերի» հետ, որն, ըստ Էնգելսի — «ամենաշատ յարատեւութիւն խոստացող տարրերն ունի և որը ներկայի մէջ ներկայացնում է ներկայի յեղաշրջումը — ապագան, ուրեմն բանւորականը»: Իսկ մի այլ անդամ նա ուղղակի բանւորական բարոյականութիւնը «ապագայի բարոյականութիւն» է անւանում, — «դասակարգերից և զբանց յիշողութիւններից վեր կանգնած մի հեմարիս մարդկային բարոյականութիւն» (ընդդժ. Վ. Խ.). որ հնարաւոր կը լինի հասարակութեան այն ատիճանի վրայ, որը դասակարգային հակադրութիւնը ոչ միայն վերացրել է, այլ և մոռացել է կենսքի գործնականի համար:*)

*) Նոյն իսկ սոցիալիզմի էթիկական հիմնաւորման հակառակորդ ուղղափառ Կառլեյկին ընդունում է, որ պրոլետարիատի դասակարգային շահը

Այդ դաստիարագութեան հասարակութիւնը ընկերվարական հասարակութիւնն է: Անդաստիարգ հասարակութիւնը, մի և ամբողջական մարդկութիւնը կունենայ նաև մի բարոյակա-նութիւն: Սոցիալիզմը իր մէջ կրում է մարդկութեան բարոյականութեան հիմունքները: Սոցիալիզմը իր համա-մարդկային սկզբունքներով, «առանց սեռի ու ծագման խտրութեան հաւասար իրաւունքներ և պարտականու-թիւններ պահանջելով՝ ներկայաց-նում է ապագան» և նախապատրաս-տում այն հասարակութիւնը, ուր մի-այն ամբողջովին հնարաւոր պիտի լի-նի «ճշմարիտ մարդկային բարոյակա-նութիւնը»: Դա կը լինի բարոյակա-նութեան պատակ, հասարակական տե-

համապատասխանում է ամբողջ հասարակութեան շահերը կերթելով դաս-տիարակութեան հասարակութիւնը ընդու-նում է «մարդկանց կամեաւելութիւ-նը» և սրանից ծագող նոր բարոյա-կան իրարը:

տակէտից ինքնարժէք, այսինքն ա-զատ և հաւասար մարդկանց հասարա-կութիւնը, հիմնւած բոլորի ձգտումնե-րի ու շահերի ներդաշնակութեան, նը-բանց բարոյական մտածողութեան կամեցողութեան ու գործողութիւննե-րի միութեան վրայ:

Ահա սոցիալիստ մարդկութիւնը. — սո-ցիալ-տնտեսապէս ազատագրւած ու բարոյակա-նութեան վերածնւած «նոր մարդ-կութիւնը»:



«Ազգային գրադարան»



NL0152727

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «ԱՇԽԱՏԱԻՈՐ»-Ի
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ



1. Ե Բրեելիօ. Բրեելիովսկայա. — Ինչ-
պէտք է անել Հիմնադ. ժող. 5 կ.
2. Ն. Ա. Բուբակին. — Հողի սեփական
նութիւնը և համայնական սեփա-
կանութիւնը 1⁰ կողմ.
3. Վ. ԽՈՐԷՆԻ — Ինչ է սոցիալիզմը.
գինն 15 կողմ.
4. Ժ. Ժարեա. — Սաղաղութեան գաղա-
փարը. գինն է 10 կողմ.
5. Վ. Խ—նի. — Մեր ծրագիրը — Հայ Յ.
Գաւազակցութեան ծրագրի պարզ բա-
ցատրուիւնը — գինն է 20 կ.
6. Կարեբիւկ. — Նոր լեռան քարոզը,
թարգ. Տ. Յ. 10 կ.
7. Վիլինիւր Լիբկնեխ. — Սարգերը և
ճանճերը, գինն է 10 կ.
8. Լիբին. — Ինչ է Հիմնադիր ժողովը
Ռուս թարգ. օր. Լ. Յարութիւն-
նեան գինն է 10 կողմ.
9. Վ. ԽՈՐԷՆԻ. — Ե՛րբ և ինչպէս պէտք
է լինի սոցիալիստական յեղափո-
խութիւնը գինն է 50.
10. Պ. Իււկլեւիչ. — Աշխատատեղերի
Միջազգային Միութիւնը (Ռուս-
րէնից փոխադրեց Ռուսոն. գ. 20 կ.
11. Վ. ԽՈՐԷՆԻ. — Սոցիալիզմ և բու-
րոյականութիւն, գինն է 20 կ.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.